ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Հեռ./ Ֆաքս՝ 53-09-86 Երևան-19, Պռոշյան փ.1-ին փակուղի 20

«02» 12 2021թ. № 19/2148

«Ռուբ-Ռոբ» ՍՊԸ
տնօրեն Ռ. Ասատրյանին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրն միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Պետական պահպանության ծառայության և «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի օգոստոսի 17-ին կնքվել է ՊՊԾ-ԳՀԱՇՁԲ-1/2021-17-1 ծածկագրով պայմանագիր, որի 1.1 և 1.2 կետերի համաձայն՝

«1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:»:

Պայմանագրի կատարման վերջնաժամկետը՝ համաձայն պայմանագրի N 1 հավելվածի, սահմանվել է մինչև 2021թ. սեպտեմբերի 30-ը, որը երկարաձգվել է 2021 թվականի սեպտեմբերի 28-ին կնքված պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 Համաձայնագրով և սահմանվել է մինչև 2021թվականի հոկտեմբերի 15-ը:

Տեղեկացնում ենք, որ պայմանագրի կատարման ժամկետը ավարտվել է, սակայն «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի կողմից աշխատանքները մի մասով չեն կատարվել, ինչպես նաև կատարված աշխատանքներում արձանագրվել են թերություններ :Չկատարված և թերակատարված աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 546202 (հինգ հարյուր քառասունվեց հազար երկու հարյուր երկու դրամ) ՀՀ դրամ:

Պետական պահպանության ծառայության 23.11.2021թ. N 19/2069 գրությամբ «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ին առաջարկվել է պայմանագրի տեխնիկական բնութագրի 1-ին չափաբաժնով նախատեսված աշխատանքների ամբողջ ծավալը ավարտել մինչև ս.թ. նոյեմբերի 26-ը և տեղեկացվել է, որ այլապես կձեռնարկվեն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցներ:

Պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված աշխատանքների մի մասը «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի կողմից կատարվել է 2021 թվականի հոկտեմբերի 15-ից հետո մինչև 2021 թվականի նոյեմբերի 10-ը, այսինքն՝ պայմանագրի կատարման ժամկետի ավարտից հետո, որի համար վերջինիս նկատմամբ հաշվարկվել և կիրառվել է տույժ: Ս.թ. նոյեմբերի 10-ից հետո «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի կողմից որևէ աշխատանք չի կատարվել:

«Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի 1.1 և 1.2 կետերով ստանձնված պարտավորությունների խախտմամբ պայմանավորված՝ Պետական պահպանության ծառայությունը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածը, 345-րդ հոդվածի 1-ին մասը և 466-րդ հոդվածի 3-րդ մասը, ղեկավարվելով 17.08.2021թ. կնքված ՊՊԾ-ԳՀԱՇՁԲ-1/2021-17-1 պայմանագրի 2.1.3 կետով միակողմանի մասնակի հրաժարվում է «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի հետ կնքած ՊՊԾ-ԳՀԱՇՁԲ-1/2021-17-1 ծածկագրով գնման պայմանագրից՝ համարելով այն մասնակի՝ չկատարված և թերակատարված աշխատանքների մասով, լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ղեկավարվելով ՊՊԾ-ԳՀԱՇՁԲ-1/2021-17-1 պայմանագրի 5.2 կետով «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ից կգանձվի տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, այն է 16075 ՀՀ դրամ: Նշված պայմանագրի 5.3 կետի համաձայն՝ Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, այն է 3823 ՀՀ դրամ: Պայմանագրի միակողմանի լուծումը կպարտավորեցնի «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ին վճարելու պայմանագրի և որակավորման ապահովումները:

Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ «Ռուբ-Ռոբ» ՍՊԸ-ի նկատմամբ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 45-րդ կետի պահանջները:

Ս. Հովհաննիսյան